գաւորաց Դպրոցի աշակերտաց մանկե֊րը և սրտից փափաքը ուսումնասիրու֊թեան. տեսնելով որ հետզհետէ լեզ֊ուաց և կարևոր առարկայից դասատու֊ներ նշանակուեցան յԱղդաւէր Մ. Էջ. Կաթողիկոսէն ամենայն Հայոց։

Նաև սուրբ Ծննդեան ճրագալուցի երեկուն Ս. միաբանութեան սեղանա֊տան մէջ մի ճառ, և առաւօտուն Ս. Էջ. Կաթողիկոսի ներկայութեան եր֊կու ճառեր կարդացուեցան. զորոնք ևս յաջորդ ամսագրաց միջոցաւ ու֊նինք հրատարակել։

---

## Աստուածարեալ Վեհափառ Հայրապետ և սրբագումար սրբազան Հարք.

»Շնորհաւոր նոր տարի և բարի Կաղանդ...

Բոլորեցաւ փութաթռիչ նոր ամ մերոց կարճ կենաց,
և հոլովեալ զընթացս իւր ի շրջան իւր վաղվաղենոյ.
զքանի բերկրանս հոգեկոչութեամբ կնքեաց ի մերս նա ճակատ,
և զեռ որքան խնդից պատճառ իւր յաջորդն հոգացաւ։
Այսպէս նաև ուրեգակ ձոխ գարնանային ընծայօքն,
թէ և անդէն լինի ծաղկէ փփթոյն նշուլից կենսական.
բայց յամառն ախուեալ առատ ջերմէջ լուսոյն զօրութիւն,
ա՛ գասառոք գործէ վաստակս երկրագործաց եռանդուն,
Եթէ բնութիւն յանձրևս կացեալ ծաղկանց լուսոյ Արեգին,
հետ զհետէ գաղտագողի առնի զանձուք թանկագին.
ի ժամանել ձմեռնայնոցուաց ի կէտ լման տարւոյն նոր,
որչափ պարտին զերբեանց հոգալ զպէտս կարեաց նորանոր.
Նոյնպէս մեծ և անզգաստ խափանեալ ի վաղուց,
ի գործոց անտի մշակաց նախնի յԱստուածաշունչ ի զարգացս.
այսօր զՎ. Էջ. Հայրապետին զի ընտրեալ տեսչ գթով.
ընդ նոր տարւոյն սկզբն առցեն և ձեռնարկ նոր մեծագոյն.
Զերօք Վեհափառ պարոն յաւէտ սկսեալ ի խնդ Արարատ,
Մաշտոցաւոր միաբանութիւն ի քնոյ ի կէս նա ուրախ և ազատ.
և ընդ հետ մեծապայծառ հարկանել քաղցր լղեալ,
եթէ Սրբէք Հայկայ զգեցան ընդ նոր տարւոյն և նոր կեանք։
Ընդերկրն եռեւս զաւխորհրդէն Վեհին չքնաղ ըղձեռնարկ.
զի Քրիստոսեան Ցաճոյն մեծ քև ընկալաւ ըղձոր կարգ.
և սրտառուչ մաղթանք Հայոց վերառլոցան ի յեթեր,
զի բարձրեալն քև զհնչիւնս այդ նորոգեսցէ զերիր աւեր.
Ընդերկրն վէր յ հանդիսաւոր ձգանց Վեհին եռանդուն,
ի փարատել զքոյդ որդւոց զմնաց անարգ մթութիւն.
ո՛ Հայր մեր Վեհ, և այսպէս ցուցցէ զարդիւնս բազմաշխատ.

Ի վէմն հիմնեալ Ուսումնարանս ուսմանց լցեալ յորդառատ,
Տարին սահեալ քաղցր է որդւոյդ Հայրապետով բաղձութեան,
զի շնորհափառ սուրբ Միւռոնի հանդէս չքնաղ օրհնութեան,
յուսով ելից զսիրտս մեր և հաստատեաց յայն կարծիս,
թէ նորահաս տարին բերցէ նորոյ բարեաց զհաւաստիս.
Բերկրեաց սիրտ իմ, թնդաց սիրով. հրաւէր կարդայ քոյդ եղբարց,
փութեա անվախ այսօր ի լուր մերս անձկալի Հայկենեաց
զի տխրազգեացք թօթափեսցեն ըղձօղ ցաւոց հինօրեայ,
և զուարթամիտք նոր բերկրութեամբ լցցին յաւէտ առ յապայ.
Համբակդ երբեմն թոթովախօս մի երկնչիր յայսմ աւուր,
զկապ լեզուիդ փակեաց Տէր քո ուսմամբ պէսպէս հեշտալուր.
և ի տխուր մեծապարգև շնորհացն այն ի փոխան,
զերախտագէտ սիրտ և լեզու ձօնեա վեհին Երամեան,
Ընկերք աշխոյժ փութացուք ած երախտալից ի տաճար,
զխրատու ալայկ և զհեշտալեա երգել ի ձայն զուարթարար.
զի թէ տաճարն նոյն ձեռամբ զնախկինն եգիտ փառս և զշուք,
աղօթիւք մեր և զթել կենացն պահպանեսցէ մեծաշուք.

Աշակերտ Է. դասարանի Գրիգոր Ս. Մաթևոսեան.

1369 ամի
1 Յունուարի
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## Աստուածարեալ Վեհափառ Տէր, և խոհեմագոյն Հանդիսականք.

„Շնորհաւոր նոր տարի և բարի կաղանդ„ :

Հունչ օրհներգու, ողեա զգալուստ տարւոյն նոր,
Եւ խրախուսեա ի նոյն զընկերսդ բոլոր,
Բարեմաղթեա զպարգև Հոգւոյն եօթնարփի
Ի լուր Վեհիս յայս տարեմուտ ըղձալի:
Տարածեա Տէր զշող շնորհացդ քաղցրաշունչ
Ժամ է պատեհ զի ըզգեսցուք զնոր շունչ,
Եւ այս պտուղ հոգւոց անկոյս բանական
Մատաղ ի տիս դեղ լինիցի փրկական,
Ծաղկեսցի Ջեռք բողբոջ պէս պէս գիտութեանց
Հալածեսցի յԱզգէ մերմէ հեռ նախանձ
Եւ անդաստան մտաց մերոց ամայի
Զուարթասցի առատ սերմամբք յայս տարի:
Օհրանածայր եհաս տարին բազմարաղձ
Որում ի սկզբն ամանակաց վեհ Աստուած,
Ընքննելի կամօք զկենսասփիւռ եա ծնունդ

Զի հողածինքս տացուք կենաց ըզծնունդ:
Եւ որ միով սքանչելագործ իւր բանիւ
Աւուրց, ամսոց, ամաց շարժեաց զմեծ անիւ
Զչքնաղագեղ նա և լուսոյն զշող սփռեաց,
Զի արարածք միշտ սիրեսցեն զլոյս անանց,
Այսօր գալձեալ շնորհէ զնորոգ տարեգլուխ
Եւ միշտ պայծառ պահէ զիւր լոյս կենսաբուղխ
Սակայն բարէ. տուր ազինք յարևմուտս
Գոգցես միայն զնորին քօղշեն ըզփայլմունս:
Իսկ խանձարուրըն մարդկութեան տուն Հայրց
Որ նախածնունդ լուսոյն սփռեաց զանշէջ բոց,
Ի մղոնջուց խեթիւ հայի յայն աղբիւր
Յորմէ բղխեաց նա կենսական զանոյշ բոյր:
Սիրեա Ազգդ իմ զմշտատև զայն ըզլոյս
Հնգերորդի դարուն ուղղեա զմտացդ յոյս,